մաղթանօք մեծաց նախնի նահապետացն և Մովսիսի մարգարէին. և մեծի լուսաւորչին մերոյ սրբոյն Գրիգորի» (էջ 97):

Դավրիժեցու քրիստոնյա լինելու պարագան և դրա առթած որոշ դատողությունների բնույթը երբեմն ներկայացվել է իբրև սնահավատության դրսևորում: Դրանում ճշմարտության տարր, անշուշտ, կա, սակայն չի կարող մեկնակետային լինել Դավրիժեցու աշխարհայացքը գնահատելու համար:

Պատմիչի, և մանավանդ՝ ստուգապատում պատմիչի կերպարաստեղծմանը նպաստում են վկայագրությունները նյութի ու տվյալների պրպտումների վերաբերյալ: Դրանք ցուցանում են նրա աշխատաոճի նրբությունները և վերհանում մարդկային բնավորության բազմաթիվ գծեր: Դավրիժեցին աշխատասեր է, արդարամիտ, պատասխանատու իր վկայագրումների ապագա ընթերցողների առջև և ամեն առիթ օգտագործում է էլ ավելի հավաստի փաստեր ներառելու իր պատմագրքում, իսկ արդեն ներառվածների առթիվ ձգտում է լրացուցիչ կռվաններ հայթայթել: Ինչպես՝ «Եւ մեք յորժամ ելեալ ի խնդիր պատմութեանց շրջեաք, գնացաք յերկիրն Նախչուանու ի գաւառն Երնջակ, և ի գիւղն Ապարաներ, պատահեցաք և առնս այսմիկ Աղամիրս, և տեսաք զինքն զտեղիս, և զսպիսն վիրացն, և նա պատմեաց զմեզ զպատմութիւնս զայս» (էջ 178–179), «...և յորժամ եկաք մեք ի Սպահան՝ տեսաք աչօք մերովք զքարինսն, և թուեցաք և ապա գրեցաք» (էջ 191), «Արդ՝ զքարանց տանելոյ թուականն գտաք և գրեցաք, իսկ զԼուսաւորչի Աջին տանելոյն, և զՄելքիսէթ կաթուղիկոսի տանելոյն՝ ոչ գտաք. վասն որոյ և ոչ գրեցաք: Եւ այս ևս այսպէս» (էջ 191) և այլն:

Մյուս կողմից՝ աշխատանոցային այսպիսի մանրամասների ու վկայակոչումների ներկայացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ, ընդհանրապես, պատմագիրների շարադրանքին ուղեկից է իրենց հավատ չընծայելու հավանականության բարդույթը: Դրանք երբեմն զուտ տեքստային հավաքության առումով ավելորդ են թվում, մանավանդ որ՝ հաճախ ռիթմից գցում են